Գառնիկ Սամսոնի Առաքելյան

Ծնվել է 1955թ. հունիսի 7-ին՝ Ասկերանի շրջանի Բալուջա /Այգեստան/ գյուղում: Ավարտել է տեղի միջ. դպրոցը: 1974-76թթ. ծառայել է Սովետական բանակում: 1981-թ-ին սովորել է Ադրբեջանական ՍՍՀ-ում, ավարտելով առևտրի ուսումնարանը: Ամուսնացած է, ունի 3 զավակ: 1986թ. եղել է...

- Ե՞րբ վերադարձաք Հայաստան:
- Սումգայիթի ջարդերից հետո: 1987թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Ղարաբաղում գնում էր ստորագրահավաք, որի կազմակերպիչներն էին՝ Արկադի Կարապետյանը, Մուրադ Պետրոսյանը և ուրիշ հայրենանվեր տղաներ: Իհարկե՛, գործընթացը գնում էր ներքին կարգով: Ես Ռուսաստանում էի, երբ լսեցի այդ մասին և որոշեցի անմիջապես հետ վերադառնալ: Վերադառնալով ծանոթացա գործընթացին՝ 1987թ. դեկտեմբերն էր:
- Ինչի՞ համար էր ընթանում այդ գործընթացը:
- Մեր պապենական հողերը Հայաստանին վերամիավորելու համար: Նպատակը մեկն էր, որ միանայինք Մայր Հայաստանին: Անձամբ ես չեմ ճանաչում անկախ Ղարաբաղ:
- Ինչպե՞ս էր ընթանում գործընթացը:
- Բավական ակտիվ: Ներքին շտաբը գործում էր Ստեփանակերտում. «մեր ու մանուկ» ստորագրում էին: Ղարաբաղի ժողովուրդը կարոտով էր նայում Հայաստանին: Յուրաքանչյուր շրջան ուներ իր շտաբը: Հադրութում շտաբի պետը Արթուր Մկրտչյանն էր, Մարտակերտում՝ Վիգեն Շիրինյանը, Շահումյանում՝ Շահեն Մեղրյանը, Ստեփանակերտում՝ Արկադի Կարապետյանը, Մուրադ Պետրոսյանը... Շարժումն ընթացավ մինչև «Կռունկ» կոմիտեի ձևավորումը, որը նախագահեց՝ Արկադի Մանուչարովը: Ձինյալ պայքարի փուլն էր սկսվել, քանի որ մեր խաղաղ ցույցերին ադրբեջանցիները արյունահեղությամբ էին պատասխանում:
- Հետագա ի՞նչ քայլեր էիք պատրաստվում կատարել:
- Մենք սկսեցինք զենքեր հայթայթել- յուրաքանչյուրիս հնարավորությունն օգտագործելով: Անգամ մեր անձնական փողերով: Կապվելով Ռուսաստանի հայ տղաների հետ, կնոջս և երկու երեխաներիս հետ միասին, միայն 2 ամիս Ռուսաստանից - Հայաստան զենք տեղափոխեցինք, որտեղից էլ տարանք դեպի Շահումյան և Մարտակերտ: Դա 1989-90թթ. էր: Վտանգավոր էր, քանի որ 1988թ. փետրվարի 13-ից մինչև 1991թ. օգոստոսի 20-ը, Ադրբեջանը Ռուսաստանի հրամանով պարետային ժամ էր մտցրել Ղարաբաղում:
- Ինչպիսի՞ն է եղել ձեր մասնակցությունը հետագայում:
- Երբ ձևավորվեցին ինքնապաշտպանական ջոկատները, ես անդամագրվեցի Միշիկի ջոկատին, այնուհետև, Միշիկի զոհվելուց հետո կազմավորեցի իմ 10 հոգանոց ջոկատը: Մասնակցել եմ Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական մարտերին, այնուհետև Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանությանը: Քարվաճառի ազատագրման ժամանակ արդեն ձևավորված բանակի կազմում էինք: 2 անգամ վիրավորվել եմ: Իմ ջոկատից 4 հոգի զոհվել են:
- Մի քիչ էլ խոսենք ներկայի մասին:
- Այսօրվա մասին ի՞նչ ասեմ: Երեկվա բոլշևիկներն այսօր դարձել են եվրոպական ժողովրդավարներ: Ոչինչ իր տեղում չէ: Կռված տղաներից շատերն էլ դրսում են: Կարիքն է ստիպել, քանզի մենք մեր «ՏԵՐԸ» չունենք:
- Ինչպե՞ս կներկայացնեք ազատամարտին մասնակից տղաների ապրելակերպը:
- Ապրում են ծայրահեղ աղքատության մեջ: Աշխատանք չունեն: Հանուն երեխայի գող են դառնում, իսկ եվրոպական «ազատ բիզնեսի» շրջանակներում չարչի են

դարձել: Մեզ միշտ ճնշված վիճակում են պահում, որ ինչ ուզենան անեն:

- Ուրեմն հիասթափությունն իշխե՞լ է Ձեզ:
- Իհարկե ո՛չ: Ո՛չ թե Արագածի շուրջը պետք է շուրջպար բռնեինք, այլ Մասիսի շուրջը... և կբռնե՛նք:
- Ի՞նչ կասեք բաշխվող մարտական խաչերի և մեդալների մասին:
- Բաժանված մեդալներն ու խաչերը գերազանցել են մասնակիցների թվին: Մեր իշխանությունների տված դեղով ենք այսօր տառապում: Տառապում է նաև ամբողջ ժողովուրդը: Սա սպիտակ գենոցիդից էլ վտանգավոր է: Իհարկե՛, դա իմ անձնական կարծիքն է...